ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԻՄՆԱՐՑԵՐԻ ԲԱԺՆԻ
ՊԵՏ ԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2026 թվականի հունվարի 7-ից մինչև հունվարի 31-ը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի բաժնի փորձագետ Էմմա Քյուրքչյանի՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերաբերյալ:

Հաշվետու ժամանակահատվածում իմ աշխատանքային գործունեությունն ուղղված է եղել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանը, սոցիալական ներառման քաղաքականության արդյունավետ իրականացմանը, ոլորտային իրավական կարգավորումների բարելավմանը, ինչպես նաև տեղեկատվական համակարգերի զարգացմանն ու շահառուների անհատական խնդիրների խորացված ուսումնասիրությանն ու դրանց պատշաճ լուծումների մշակմանը: Աշխատանքները կատարվել են նախարարության ռազմավարական ուղղություններին և բաժնի գործառույթներին համապատասխան:

- Իրականացվել են քաղաքացիների դիմում-բողոքների ուսումնասիրման և դրանց արձագանքման աշխատանքներ. վերլուծվել են դիմումները, տրամադրվել են անհրաժեշտ պարզաբանումներ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների, արտոնությունների և պետական աջակցության ծրագրերի վերաբերյալ:
- Բաժնի պետի հանձնարարությամբ կազմվել են գրություններ, տեղեկանքներ և այլ փաստաթղթեր, իրականացվել են ընթացիկ աշխատանքներ, ինչպես նաև պատրաստվել են առաջարկություններ և եզրակացություններ՝ բաժնի գործառույթներից և խնդիրներից բխող:
- Հաշվետու ամսվա ընթացքում ուսումնասիրվել են նախարարության կողմից դրամաշնորհային մրցույթում հաղթած կազմակերպությունների հետ կնքված

նոր պայմանագրերը՝ հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-վերականգնողական և շուրջօրյա խնամքի ծառայությունների մատուցման մասով:

- Շարունակվել է համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ: Կայացել են մի շարք հանդիպումներ և քննարկումներ միջազգային գործընկերների (մասնավորապես՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և ներառական քաղաքականության ոլորտում ներգրավված կառույցների) հետ: Քննարկվել են ոլորտում իրականացվող բարեփոխումների ընթացքը, վիճակագրական տվյալները, առկա մարտահրավերները և նորարարական լուծումները: Միջազգային գործընկերների և դեսպանների հետ կայացած հանդիպումների շրջանակում պատրաստվել և տրամադրվել են ոլորտին առնչվող տեղեկանքներ և տեղեկատվական նյութեր:
- Հաշվետու ամսվա ընթացքում մասնակցություն եմ ունեցել ապաինստուցիոնալացմանն ուղղված աշխատանքներին, մասնավորապես՝ համայնքային ծառայությունների զարգացման շրջանակում իրականացվող նախաձեռնություններին: Այդ համատեքստում ներգրավված եմ ՀՀ Արմավիրի մարզում հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսվող անկախ կյանքի կենտրոնի ստեղծմանն ուղղված աշխատանքներին:

05.02.2026թ.

Փորձագետ՝ Էմմա Քյուրքչյան